

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Մասնակցություն միջոցառումներին

- ✓ 2019թ. սեպտեմբերի 2-6-ը Սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի առաջատար մասնագետ Ն. Մանդալյանը մասնակցել է ք. Մոնպելյեում (Ֆրանսիա) կայացած Եվրոպական հարևանության գործիքի ներքո ընթացող «Շրջակա միջավայրի միասնական տեղեկատվական համակարգի ներդրման համակարգ - Արևելք» (ENI-SEIS II East) ծրագրի շրջանակում կայացած հողօգտագործման ոլորտում բնապահպանական հաշիվների օգտագործման ինտեգրված մոտեցումների վերաբերյալ մասնագիտական դասընթացին,
- ✓ 2019թ. սեպտեմբերի 3-5-ը ՀՀ վիճակագրության պետական խորհրդի անդամ – Արմստատի նախագահի տեղակալ Գ. Անանյանը և Գյուղատնտեսության վիճակագրության բաժնի պետ Ա. Ավագյանը մասնակցել են ք. Բիշքեկում (Ղրղզստան) կայացած Գյուղատնտեսության վիճակագրության կատարելագործման հարցերի վերաբերյալ ԱՊՀ անդամ պետությունների վիճակագրական ծառայությունների փորձագետների խորհրդակցությանը,
- ✓ 2019թ. սեպտեմբերի 9-18-ը Վճարային հաշվեկշռի և արտաքին առևտրի վիճակագրության բաժնի գլխավոր մասնագետ Հ. Ջանլաթյանը, Մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների բաժնի առաջին կարգի մասնագետ Ս. Մովսիսյանը, Վիճակագրական տեղեկատվության տարածման բաժնի առաջին կարգի մասնագետ Ա. Մարտիկյանը և Միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի երկրորդ կարգի մասնագետ Վ. Սողբաթյանը մասնակցել են ք. Սոֆիայում և ք. Լովեչում (Բուլղարիա) կայացած Բուլղարիայի ԱԳՆ-ի «Վարչական կարողությունների և ժողովրդավարական ինստիտուտների կառուցում» ծրագրի շրջանակում Բուլղարիայի Հանրապետության ազգային վիճակագրական ինստիտուտի և Ազգային և համաշխարհային տնտեսության համալսարանի կողմից կազմակերպված «Վիճակագրության տեսության ներածություն և վիճակագրական հետազոտության կազմակերպման հիմունքները» թեմայով դասընթացին,
- ✓ 2019թ. սեպտեմբերի 11-13-ը Գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժնի գլխավոր մասնագետ Զ. Ավետիսյանը մասնակցել է ք. Մինսկում (Բելառուսի Հանրապետություն) կայացած «Սպառողական գների ինդեքսը» խորագրով սեմինարին,

- ✓ 2019թ. սեպտեմբերի 12-13-ը ՀՀ վիճակագրության պետական խորհրդի անդամ Ն. Բաղդասարյանը ու Սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի առաջին կարգի մասնագետ Ա. Համբարձումյանը մասնակցել են ք. Կոպենհագենում (Դանիա) կայացած Եվրոպական հարևանության գործիքի ներքո ընթացող «Շրջակա միջավայրի միասնական տեղեկատվական համակարգի ներդրման համակարգ - Արևելք» (ENI-SEIS II East) ծրագրի շրջանակում կայացած բնապահպանական տեղեկատվության արդյունավետ փոխանակման վերաբերյալ երկրորդ աշխատաժողովին,
- ✓ 2019թ. սեպտեմբերի 16-19-ը Տեղեկատվական ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիաների վարչության տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման բաժնի գլխավոր մասնագետ Ս. Շախգելոյանը մասնակցել է ք. Բուդապեշտում (Հունգարիա) կայացած Վիճակագրական տվյալների և մեթատվյալների փոխանակման (SDMX) վերաբերյալ գլոբալ կոնֆերանսին,
- ✓ 2019թ. սեպտեմբերի 16-20-ը ՀՀ վիճակագրության պետական խորհրդի անդամ – Արմստատի նախագահի տեղակալ Գ. Գևորգյանը մասնակցել է ք. Ժնևում (Շվեյցարիա) կայացած «Մարդահամարի և կացարանների հաշվառումներն Արևելյան Եվրոպայի, Կովկասի և Կենտրոնական Ասիայի երկրների համար» խորագրով աշխատաժողովին,
- ✓ 2019թ. սեպտեմբերի 17-18-ը Մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների բաժնի պետ Լ. Խաչատրյանը և Գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժնի պետ Մ. Երիցյանը մասնակցել են ք. Մոսկվայում (Ռուսաստանի Դաշնություն) կայացած «Փորձը և ապագա մարտահրավերներն ուղղված Արևելյան Եվրոպայի և ԱՊՀ երկրներում եկամուտների և բարեկեցության չափմանը» խորագրով գիտաժողովին,
- ✓ 2019թ. սեպտեմբերի 17-19-ը Արմստատի նախագահ Ս. Մնացականյանը մասնակցել է ք. Սոֆիայում (Բուլղարիա) կայացած Բուլղարիայի ազգային վիճակագրական ինստիտուտի հետ հետազա համագործակցության հնարավորությունների ու ուղիների քննարկմանը,
- ✓ 2019թ. սեպտեմբերի 24-26-ը Արմստատի նախագահ Ս. Մնացականյանը և ՀՀ վիճակագրության պետական խորհրդի անդամ Ա. Սաֆյանը մասնակցել են ք. Քիշնևում (Մոլդովա) կայացած Արևելյան Եվրոպայի, Կովկասի և Կենտրոնական Ասիայի երկրների համար Բարձր մակարդակի սեմինարին,

- ✓ 2019թ. սեպտեմբերի 23-26-ը Միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի գլխավոր մասնագետ Հ. Սողոմոնյանը մասնակցել է ք. Նյու Դելիում (Հնդկաստան) կայացած «ԿՁՆ 11-ի մշտադիտարկում, հնարավորություններ և մարտահրավերներ և ինչպես կարելի է ներդաշնակեցնել քաղաքի/քաղաքային և գյուղական սահմանումները» թեմայով տեխնիկական աշխատաժողովին,
- ✓ 2019թ. սեպտեմբերի 30-ից հոկտեմբերի 2-ը Բիզնես ռեգիստրի, ընտրանքի և դասակարգիչների բաժնի պետ Վ. Արևշտյանը մասնակցել է ք. Ժնևում (Շվեյցարիա) կայացած Բիզնես ռեգիստրների փորձագետների խմբի աշխատանքային հանդիպմանը,
- ✓ 2019թ. հոկտեմբերի 3-4-ը ՀՀ վիճակագրության պետական խորհրդի անդամ Ն. Բաղդասարյանը ու Սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի առաջին կարգի մասնագետ Ա. Համբարձումյանը մասնակցել են ք. Ժնևում (Շվեյցարիա) կայացած Կլիմայի փոփոխության վիճակագրություն արտադրողների և օգտագործողների համար փորձագիտական համաժողովին,
- ✓ 2019թ. հոկտեմբերի 7-11-ը Մարդահամարի և ժողովրդագրության բաժնի գլխավոր մասնագետ Ա. Թոխաթյանը մասնակցել է ք. Բիշքեկում (Ղրղզստան) կայացած «Հյուսիսային և Կենտրոնական Ասիայի երկրների համար նախատեսված կենսական վիճակագրության հարցերը» խորագրով աշխատաժողովին,
- ✓ 2019թ. հոկտեմբերի 8-9-ը ՀՀ վիճակագրության պետական խորհրդի անդամ Ն. Բաղդասարյանը մասնակցել է ք. Բրատիսլավայում (Սլովակիայի Հանրապետություն) կայացած Եվրոպական հարևանության գործիքի ներքո ընթացող «Շրջակա միջավայրի միասնական տեղեկատվական համակարգ – Արևելք» (ENI SEIS II East) ծրագրի Շրջակա միջավայրի վիճակի մասին զեկույցի վերաբերյալ տարածաշրջանային աշխատաժողով,
- ✓ 2019թ. հոկտեմբերի 8-10-ը Սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի առաջատար մասնագետ Ն. Մանդալյանը մասնակցել է ք. Ալմաթիում (Ղազախստանի Հանրապետություն) կայացած «Կայուն զարգացման նպատակների արդյունավետ ջրօգտագործման և ջրի պակասի պատճառած լարվածության (սթրեսի) ցուցանիշները» թեմայով սեմինարին,

- ✓ 2019թ. հոկտեմբերի 14-16-ը ՀՀ վիճակագրության պետական խորհրդի անդամ Վ. Դավթյանը մասնակցել է ք. Ժնևում (Շվեյցարիա) կայացած «Նոր աղբյուրներ և նոր տեխնոլոգիաներ» վիճակագրական տվյալների հավաքագրման վերաբերյալ աշխատանքային հանդիպմանը,
- ✓ 2019թ. հոկտեմբերի 16-17-ը Արմատատի նախագահ Ս. Մնացականյանը մասնակցել է ք. Ժնևում (Շվեյցարիա) կայացած Եվրոպական վիճակագիրների կոնֆերանսի Բյուրոյի հանդիպմանը,
- ✓ 2019թ. հոկտեմբերի 22-24-ը Արմատատի նախագահի խորհրդական Դ. Մարտիրոսովան մասնակցել է ք. Հռոմում (Իտալիա) կայացած «Անտառների վերաբերյալ գլոբալ բազային ցուցանիշների հավաքագրման ամրապնդումը» թեմայով աշխատաժողովին,
- ✓ 2019թ. հոկտեմբերի 22-24-ը Աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ. Քալանթարյանը մասնակցել է ք. Սեուլում (Կորեայի Հանրապետություն) կայացած ԱՄԿ-ԿՈՍՏԱՏ համագործակցությամբ կազմակերպված «Ասիայի և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում միջազգային աշխատանքային միգրացիայի վիճակագրության տվյալների հավաքագրում» 5-րդ՝ ամփոփիչ աշխատաժողովին,
- ✓ 2019թ. հոկտեմբերի 24-25-ը Որակի կառավարման բաժնի պետ Ռ. Շաբոյանը մասնակցել է ք. Անկարայում (Թուրքիա) կայացած «Եվրոպական փորձառության օրենսգրքի վերանայված տարբերակը և որակի ապահովման արդիականացված շրջանակը» խորագրով ռազմավարական կառավարական սեմինարին,
- ✓ 2019թ. հոկտեմբերի 28-29-ը ՀՀ վիճակագրության պետական խորհրդի անդամ Ն. Բաղդասարյանը մասնակցել է ք. Ժնևում (Շվեյցարիա) կայացած Բնապահպանական վիճակագրության և ցուցանիշների համատեղ աշխատանքային խմբի 16-րդ նիստին,
- ✓ 2019թ. հոկտեմբերի 28-31-ը ՀՀ վիճակագրության պետական խորհրդի անդամ - Արմատատի նախագահի տեղակալ Գ. Գևորգյանը մասնակցել է ք. Ժնևում (Շվեյցարիա) կայացած Եվրոպայի, Կովկասի և Կենտրոնական Ասիայի երկրների համար Միջազգային միգրացիայի վիճակագրության վերաբերյալ աշխատաժողովին և Միգրացիայի վիճակագրության փորձագիտական խմբի հանդիպմանը,
- ✓ 2019թ. հոկտեմբերի 28-ից նոյեմբերի 8-ը Ֆինանսների վիճակագրության բաժնի առաջատար մասնագետ Ա. Օհանջանովը մասնակցել է ք. Վաշինգտոնում (ԱՄՆ) կայացած «Հաշվեկշիռներ և կուտակման հաշիվներ (HQ 19.14)» թեմայով դասընթացին,

- ✓ 2019թ. հոկտեմբերի 29-30-ը Սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի առաջին կարգի մասնագետ Ա. Համբարձումյանը մասնակցել է ք. Բուդապեշտում (Հունգարիա) կայացած Եվրոպական հարևանության գործիքի ներքո ընթացող «Շրջակա միջավայրի միասնական տեղեկատվական համակարգի ներդրման համակարգ - Արևելք» (ENI-SEIS II East) ծրագրի շրջանակում կայացած Բեռնի կոնվենցիայի N°8 (2012) բանաձևի ներքո թոշունների տեսակային կազմի վերաբերյալ Էմերալդ ցանցի կենսաաշխարհագրական աշխատաժողովին,

- ✓ 2019թ. հոկտեմբերի 29-31-ը ՀՀ վիճակագրության պետական խորհրդի անդամ Ա. Սաֆյանը և Որակի կառավարման բաժնի պետ Ռ. Շաբոյանը, նույն բաժնի գլխավոր մասնագետ Ա. Ամիրխանյանը և առաջին կարգի մասնագետ Ա. Գրբոյանը մասնակցել են ք. Սոֆիայում (Բուլղարիա) կայացած Որակի կառավարման համակարգի վերաբերյալ ուսումնական այցելությանը:

Առաքելություններ

- ✓ 2019թ. սեպտեմբերի 2-6-ը Արմատատում էր անկախ փորձագետ Իրինա Գորյաչևան՝ «Ազգային վիճակագրական համակարգի ամրապնդման համար ազգային ռազմավարական ծրագրի իրականացում» ECASTAT դրամաշնորհային ծրագրի «Գների վիճակագրության բարելավում» բաղադրիչի շրջանակում խորհրդատվական աջակցություն ցուցաբերելու նպատակով,
- ✓ 2019թ. սեպտեմբերի 9-13-ը Արմատատում էր Իտալիայի Գյուդատնտեսական հետազոտությունների և էկոնոմիկայի խորհրդի վիճակագրական գրասենյակի ղեկավար Իրաջ Նամդարիանը՝ «Ազգային վիճակագրական համակարգի ամրապնդման համար ազգային ռազմավարական ծրագրի իրականացում» ECASTAT դրամաշնորհային ծրագրի «Ընդհանուր մեթատվյալների և միասնական ինտեգրված մեթատվյալների կառուցվածքի վերաբերյալ վերապատրաստման կազմակերպում» բաղադրիչի շրջանակում խորհրդատվական աջակցություն ցուցաբերելու նպատակով,
- ✓ 2019թ. սեպտեմբերի 9-13-ը Արմատատում էր Համաշխարհային բանկի ECASTAT դրամաշնորհային ծրագրի ԹՎԻՆԻՆԳ գործընկերության ծրագրի տնօրեն Մարգարիտա Ռոհրը՝ «Ազգային վիճակագրական համակարգի ամրապնդման համար ազգային ռազմավարական ծրագրի իրականացում» ECASTAT դրամաշնորհային ծրագրի «Ռիսկերի կառավարման համակարգը» բաղադրիչի շրջանակում խորհրդատվական աջակցություն ցուցաբերելու նպատակով,
- ✓ 2019թ. սեպտեմբերի 9-13-ը Արմատատում էր «Ազգային վիճակագրական համակարգի ամրապնդման համար ազգային ռազմավարական ծրագրի իրականացում» Համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորվող ECASTAT դրամաշնորհային ծրագրի ԹՎԻՆԻՆԳ գործընկերության թիմի ղեկավար Իգոր Չերնիշևը՝ «Ազգային վիճակագրական համակարգի ամրապնդման համար ազգային ռազմավարական ծրագրի իրականացում» ECASTAT դրամաշնորհային ծրագրի շրջանակում խորհրդատվական աջակցություն ցուցաբերելու նպատակով,

- ✓ 2019թ. սեպտեմբերի 9-13-ը Արմստատում էին Համաշխարհային բանկի վիճակագրության գծով խորհրդատու Մայքլ Սթայները և ՄԱԿ-ի Պարենի և գյուղանտեսության կազմակերպության վիճակագրության բաժնի վիճակագիրներ Նելի Գեորգիևան և Աիդա Խալիլը՝ ՄԱԿ-ի Պարենի և գյուղանտեսության կազմակերպության Գյուղատնտեսական ինտեգրված հետազոտության (AGRIS) ծրագրի շրջանակում աջակցություն ցուցաբերու նպատակով,
- ✓ 2019թ. սեպտեմբերի 10-11-ը Արմստատում էին «Expertise France» կազմակերպության Տնտեսական և ֆինանսական կառավարման վարչության պաշտոնական վիճակագրության և զարգացման բաժնի պետ Բեաթա Սուսզտերովան և Ֆրանսիայի վիճակագրության և տնտեսական հետազոտությունների ինստիտուտի (INSEE) միջազգային տեխնիկական աջակցության բաժնի պետ Դոմինիկ Ֆրանքոզը՝ «Վիճակագրությունը Արևելյան Գործընկերության միջոցով» տարածաշրջանային ծրագրի շրջանակում Արմստատի և Ֆրանսիայի վիճակագրության և տնտեսական հետազոտությունների ինստիտուտի միջև երկկողմ համագործակցության հնարավոր ուղիները քննարկելու նպատակով,
- ✓ 2019թ. սեպտեմբերի 16-27-ը Արմստատում էր անկախ փորձագետ Ֆարիադ Մեիրանը՝ «Ազգային վիճակագրական համակարգի ամրապնդման համար ազգային ռազմավարական ծրագրի իրականացում» ECASAT դրամաշնորհային ծրագրի «Աշխատուժի հետազոտություն» բաղադրիչի շրջանակում խորհրդատվական աջակցություն ցուցաբերելու նպատակով,
- ✓ 2019թ. սեպտեմբերի 30-ից հոկտեմբերի 4-ը Արմստատում էր Պորտուգալիայի վիճակագրության ավագ փորձագետ Մարիա դե Ֆատիմա Կարվալյո Մորեյրոն՝ «Ազգային վիճակագրական համակարգի ամրապնդման համար ազգային ռազմավարական ծրագրի իրականացում» ECASAT դրամաշնորհային ծրագրի «Շինարարության վիճակագրության բարելավում» բաղադրիչի շրջանակում խորհրդատվական աջակցություն ցուցաբերելու նպատակով,

- ✓ 2019թ. հոկտեմբերի 7-11-ը Արմատատում էր ՄԱԿ-ի Պարենի և գյուղանտեսության կազմակերպության փորձագետ Սոնմաթ Սոմբդիուդասը՝ ՄԱԿ-ի Պարենի և գյուղանտեսության կազմակերպության Գյուղատնտեսական ինտեգրված հետազոտության (AGRIS) ծրագրի շրջանակում NADA 5 հարթակի ներդրման և տեղեկատվական տեխնոլոգիաների գծով այլ հարցերի վերաբերյալ խորհրդատվական աջակցություն ցուցաբերու նպատակով,

- ✓ 2019թ. հոկտեմբերի 14-25-ը Արմատատում էին Ասիական զարգացման բանկի տարածաշրջանային համագործակցության և գործողությունների համակարգման բաժնի գլխավոր վիճակագիր Մահինթան Մարիասինդամը, տնտեսագետ Լիլիա Ալեքսանյանը, խորհրդատուներ Ջուլիետա Մագալանեսը և Քրիստինա Բարիսը և վիճակագրության և տվյալների նորարարության բաժնի խորհրդատու Ջոն Արվին Բերնաբեն՝ «Սպառում-օգտագործում» աղյուսակների, «Ծախսեր-թողարկում» աղյուսակների և սատելիտային հաշիվների հավաքագրման և վերլուծության գծով խորացված տեխնիկական ուսումնասիրություն և ուսուցում անցկացնելու նպատակով,

- ✓ 2019թ. հոկտեմբերի 21-25-ը Արմատատում էր ՄԱԿ-ի Պարենի և գյուղանտեսության կազմակերպության վիճակագրության բաժնի վիճակագիր Աիդա Խալիլը՝ Գյուղատնտեսական ինտեգրված հետազոտության (AGRIS) ծրագրի շրջանակում Համակարգչի վրա հիմնված անհատական հարցազրույցի (CAPI) վերաբերյալ դասավանդողների ուսուցում անցկացնելու նպատակով:

Տեղային սեմինարներ

- ✓ 2019թ. սեպտեմբերի 2-6-ը Վիճակագրական տեղեկատվության տարածման բաժնի պետ Ն. Մուշեղյանը, Մարդահամարի և Ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կույումջյանը, Աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ. Քալանթարյանը, Գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժնի պետ Մ. Երիցյանը, Տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ Լ. Մարկոսյանը, Առևտրի և այլ ծառայությունների վիճակագրության բաժնի պետ Ա. Հարությունյանը և Սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի պետ Ա. Գրիգորյանը մասնակցել են ք. Երևանում կայացած ԵԱՏՎ Վիճակագրության գծով Խորհրդատվական կոմիտեի Ճյուղային և սոցիալ-ժողովրդագրական վիճակագրության գծով ենթակոմիտեի ինտերոդ առցանց նիստին,
- ✓ 2019թ. սեպտեմբերի 2-30-ը Մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների բաժնի առաջին կարգի մասնագետ Ս. Մովսիսյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Ազգային հաշիվների համակարգ 2008. ինտեգրված գործարքների հաշիվներ» խորագրով առցանց դասընթացին,
- ✓ 2019թ. սեպտեմբերի 3-ին ՀՀ վիճակագրության պետական խորհրդի անդամ Ն. Բաղդասարյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Անտառային ածխածնի հաշվառման համակարգերը Հայաստանի անտառակառավարման ոլորտում» խորագրով աշխատաժողով-քնարկմանը,
- ✓ 2019թ. սեպտեմբերի 4-ին ՀՀ վիճակագրության պետական խորհրդի անդամ Ն. Բաղդասարյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Կլիմայի փոփոխություն. թափանցիկության շրջանակները և Փարիզի համաձայնագիրը գործողության մեջ» խորագրով աշխատաժողովին,
- ✓ 2019թ. սեպտեմբերի 5-ին ՀՀ վիճակագրության պետական խորհրդի անդամներ Ա. Սաֆյանը և Ն. Բաղդասարյանը, Աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ. Քալանթարյանը, Արդյունաբերության և էներգետիկայի վիճակագրության բաժնի պետ Ա. Ավետիսյանը և Սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի պետ Ա. Գրիգորյանը մասնակցել են ք. Երևանում տեսակոնֆերանսի միջոցով կայացած «ՄԱԿ ԿԶՆ – եվրասիական ինտեգրման խորացման նոր հնարավորություններ» տարածաշրջանային ֆորումի անցկացման կազմակերպչական հարցերի քննարկման նպատակով աշխատանքային խորհրդակցությանը,

- ✓ 2019թ. սեպտեմբերի 9-13-ը Վճարային հաշվեկշռի և արտաքին առևտրի վիճակագրության բաժնի պետ Բ. Պողոսյանը և նույն բաժնի գլխավոր մասնագետ Կ. Շախբազյանը մասնակցել են ք. Երևանում կայացած ԵԱՏՀ Վիճակագրության գծով Խորհրդատվական կոմիտեի Արտաքին և փոխադարձ առևտրի ենթակոմիտեի առցանց նիստին,
- ✓ 2019թ. սեպտեմբերի 10-ին ՀՀ վիճակագրության պետական խորհրդի անդամ Ն. Բաղդասարյանը, Սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի առաջատար մասնագետ Ն. Մանդալյանը և առաջին կարգի մասնագետ Ա. Համբարձումյանը մասնակցել են ք. Երևանում «Շրջակա միջավայրի տեղեկատվական միասնական համակարգի սկզբունքների և փորձի ներդրում» ծրագրի շրջանակում կայացած «Բաց տվյալները և էլեկտրոնային կառավարումը Հայաստանում» թեմայով կլոր սեղան-քննարկմանը,
- ✓ 2019թ. սեպտեմբերի 10-ին Վիճակագրական տեղեկատվության տարածման բաժնի պետ Ն. Մուշեղյանը և ֆինանսների վիճակագրության բաժնի առաջին կարգի մասնագետ Լ. Ասլանյանը մասնակցել են ք. Երևանում կայացած Հայաստանի տարածքային զարգացման ռազմավարության մշակման և նախորդ դասընթացներից ստացված գիտելիքների ամրապնդման նպատակով քուիզինգ սեսիային,
- ✓ 2019թ. սեպտեմբերի 11-ին Աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ. Քալանթարյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Կրթությունից՝ աշխատանք. միավորելով տվյալները, մարդկանց և հանրային քաղաքականությունը» խորագրով միջոցառմանը,
- ✓ 2019թ. սեպտեմբերի 11-ին Մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների բաժնի պետ Լ. Խաչատրյանը և Վճարային հաշվեկշռի և արտաքին առևտրի վիճակագրության բաժնի գլխավոր մասնագետ Կ. Շախբազյանը մասնակցել են ք. Երևանում տեսակոնֆերանսի միջոցով կայացած ԵԱՏՄ ինտեգրման կարողության գնահատման և ձևավորման համար պետական և միջպետական «ծախսեր-թողարկում» աղյուսակների օգտագործման գծով փորձագիտական խմբի 9-րդ նիստին,
- ✓ 2019թ. սեպտեմբերի 12-ին Աշխատանքի վիճակագրության բաժնի առաջատար մասնագետ Զ. Ավոյանը մասնակցել է ք. Երևանում կայացած Աշխատաշուկայի քարտեզագրման վերաբերյալ փորձագիտական քննարկմանը,

- ✓ 2019թ. սեպտեմբերի 12-ին Սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի առաջատար մասնագետ Ն. Մանդայանը մասնակցել է ք. Երևանում վեբինարի միջոցով կայացած Մերձարևելյան և Հյուսիս-Աֆրիկյան երկրների համար «Ջրի հաշիվներ»-ի Հայաստանյան փորձի ներկայացմանը,
- ✓ 2019թ. սեպտեմբերի 12-14-ը Ֆինանսների վիճակագրության բաժնի առաջին կարգի մասնագետ Լ. Ասլանյանը մասնակցել է ք. Վանաձորում կայացած «Տարածքային զարգացման ռազմավարական կառավարում» կարողությունների զարգացման 3-րդ դասընթացին,
- ✓ 2019թ. սեպտեմբերի 13-ին ՀՀ վիճակագրության պետական խորհրդի անդամ Վ. Դավթյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Հայաստանի թվայնացման օրակարգ» ծրագրի շրջանակում իրականացված «Թվային տնտեսության ռազմավարական գնահատում» թեմայով հետազոտության նախնական արդյունքներին ծանոթանալու և քննարկելու նպատակով հանդիպմանը,
- ✓ 2019թ. սեպտեմբերի 16-ին Վիճակագրական տեղեկատվության տարածման բաժնի գլխավոր մասնագետ Ն. Մարգարյանը և Սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի առաջատար մասնագետ Ն. Մանդայանը մասնակցել են ք. Երևանում տեսակոնֆերանսի միջոցով կայացած ԱՊՀ «Կյանքի որակի նորմատիվներ» նախագծի համաձայնեցման նպատակով փորձագիտական խմբի նիստին,
- ✓ 2018թ. սեպտեմբերի 17-ին Գյուղատնտեսության վիճակագրության բաժնի առաջին կարգի մասնագետ Լ. Թումանյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Բնական պաշարների կառավարում և էկոհամակարգային ծառայությունների պահպանություն Հարավային Կովկասում գյուղական տարածքների կայուն զարգացման համար» ծրագրի շրջանակում ՀՀ-ում գյուղատնտեսական նշանակության հողերի կառավարման տեղեկատվական համակարգի ստեղծման նպատակով շահագրգիռ կողմերի հետ ընդլայնված աշխատաժողով,
- ✓ 2019թ. սեպտեմբերի 18-19-ը Աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ. Քալանթարյանը և Սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի պետ Ա. Գրիգորյանը մասնակցել են ք. Երևանում կայացած «Վերջ տալ համացանցում երեխաների սեռական շահագործմանը և բռնությանը Եվրոպայում» ծրագրի շրջանակում Հայաստան ժամանած Եվրոպայի խորհրդի պատվիրակության հետ հանդիպմանը,

- ✓ 2019թ. սեպտեմբերի 19-ին ՀՀ վիճակագրության պետական խորհրդի անդամ Ա. Սաֆյանը մասնակցել է ք. Երևանում կայացած ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի Հայաստանյան գրասենյակում կայացած ԿԶՆ 16-ի քննարկումների վերաբերյալ հանդիպմանը,
- ✓ 2019թ. սեպտեմբերի 23-27-ը ՀՀ վիճակագրության պետական խորհրդի անդամ – Արմստատի նախագահի տեղակալ Գ. Գևորգյանը, Արարատի մարզային վարչության պետ Լ. Դավթյանը, Կոտայքի մարզային վարչության պետ Վ. Դավթյանը, Վայոց ձորի մարզային վարչության պետ Ա. Ղազարյանը, «Ազգային վիճակագրական համակարգի ամրապնդման համար ազգային ռազմավարական ծրագրի իրականացում» ECASAT դրամաշնորհային ծրագրի համակարգող Տ. Գևորգյանը և նույն ծրագրի օգնական Թ. Ավետիսյանը մասնակցել են ք.Աղվերանում կայացած «Հայաստանում հողերի սեփականության և հողատարածքների ուսումնասիրության իրականացում» թեմայով սեմինարին,
- ✓ 2019թ. սեպտեմբերի 25-ին ՀՀ վիճակագրության պետական խորհրդի անդամ Ն. Բաղդասարյանը մասնակցել է ք. Երևանում կայացած Մթնոլորտային օդի պահպանության ազգային օրենսդրության վերլուծության և կոնվենցիայի հիմնական արձանագրությունների վավերացման Ազգային գործողությունների ծրագրի վերաբերյալ ՄԱԿ-ի ԱՏՀ «Մեծ հեռավորությունների վրա օդի անդրսահմանային աղտոտվածության մասին» կոնվենցիայի բարձր մակարդակի իրազեկման հանդիպմանը և կլոր-սեղան քննարկմանը,
- ✓ 2019թ. սեպտեմբերի 27-ին ՀՀ վիճակագրության պետական խորհրդի անդամ Ն. Բաղդասարյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «ՄԱԿ ԿՓՇԿ ներքո Հայաստանի երկամյա առաջընթացի երրորդ զեկույց»-BUR3 մեկնարկային աշխատաժողովին,
- ✓ 2019թ. հոկտեմբերի 2-ին Աշխատանքի վիճակագրության բաժնի առաջատար մասնագետ Ջ. Ավոյանը և Մարդահամարի և Ժողովրդագրության բաժնի առաջատար մասնագետ Ա. Ավետիսյանը մասնակցել են ք. Երևանում կայացած «Խելամիտ/գրագետ ֆինանսներ Կովկասում, Ուկրաինայում և Իրանում» ծրագրի «Ֆինանսական գրագիտություն միգրանտների համար. քարտեզագրում և կարիքների գնահատում» հետազոտության քարտեզագրման, միգրանտների ֆինանսական գրագիտության կարիքների գնահատման, այդ գիտելիքների տրամադրման/հաղորդակցության առավել արդյունավետ ուղիների բացահայտման նպատակով կլոր-սեղան քննարկմանը,

- ✓ 2019թ. հոկտեմբերի 3-ին ՀՀ վիճակագրության պետական խորհրդի անդամ Վ. Դավթյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Ենթատարածաշրջանային նորարարությունների քաղաքականության հեռանկարները» ծրագրի վերաբերյալ կլոր-սեղան քննարկմանը,
- ✓ 2019թ. հոկտեմբերի 3-ին ՀՀ վիճակագրության պետական խորհրդի անդամ Ա. Սաֆյանը, Վիճակագրական տեղեկատվության տարածման պետ Ն. Մուշեղյանը, Միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ Հ. Եղիազարյանը, Մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների բաժնի պետ Լ. Խաչատրյանը և Վճարային հաշվեկշռի և արտաքին առևտրի վիճակագրության բաժնի գլխավոր մասնագետ Կ. Շահբազյանը մասնակցել են ք. Երևանում տեսակոնֆերանսի միջոցով կայացած ԵԱՏՀ Վիճակագրության գծով խորհրդատվական կոմիտեի 15-րդ նիստին,
- ✓ 2019թ. հոկտեմբերի 4-ին Վճարային հաշվեկշռի և արտաքին առևտրի վիճակագրության բաժնի գլխավոր մասնագետ Հ. Ջանլաթյանը մասնակցել է ք. Երևանում կայացած ՄԱԿ-ի Առևտրի և Զարգացման Համաժողովի (UNCTAD) կողմից Հայաստանի համար մշակված «Ներդրումային քաղաքականության ուսումնասիրություն» զեկույցի շնորհանդեսին,
- ✓ 2019թ. հոկտեմբերի 4-ին ՀՀ վիճակագրության պետական խորհրդի անդամ Ա. Սաֆյանը մասնակցել է ք. Երևանում կայացած ՄԱԿ-ի ԿԶՆ-16-ի ազգայնացման ծրագրի շրջանակում հանդիպմանը,
- ✓ 2019թ. հոկտեմբերի 6-9-ը ՀՀ վիճակագրության պետական խորհրդի անդամներ Ա. Սաֆյանը և Վ. Դավթյանը մասնակցել են ք. Երևանում կայացած «Տեղեկատվական տեխնոլոգիաների 23-րդ համաշխարհային համաժողով 2019» (WCIT) միջոցառմանը,
- ✓ 2019թ. հոկտեմբերի 10-ին Գյուղատնտեսության վիճակագրության բաժնի պետ Ա. Ավագյանը և նույն բաժնի գլխավոր մասնագետ Ռ. Վարդանյանը մասնակցել են ք. Երևանում կայացած Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության Կորպորատիվ արդյունքների հետազոտության Տվյալների հավաքագրման միջոցառմանը,
- ✓ 2019թ. հոկտեմբերի 15-ին Ֆինանսների վիճակագրության բաժնի պետ Հ. Տիտիզյանը և Բիզնես ռեգիստրի, ընտրանքի և դասակարգիչների բաժնի առաջատար մասնագետ Ա. Շաբոյանը մասնակցել են ք. Երևանում տեսակոնֆերանսի միջոցով կայացած Պետական ֆինանսների վիճակագրության ձևավորման համար անհրաժեշտ ՀՀ նորմատիվ իրավական հիմքի կարգավորման վերաբերյալ երկկողմ խորհրդակցություններին,

- ✓ 2019թ. հոկտեմբերի 15-17-ը Սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի առաջին կարգի մասնագետ Ա. Համբարձումյանը մասնակցել է ք. Երևանում կայացած Հետադետային կարիքների գնահատման, Սենդայի գործողությունների ծրագրի մշտադիտարկման և Աղետների պատճառած կորուստների շտեմարանի վերաբերյալ տարածաշրջանային աշխատաժողովին,
- ✓ 2019թ. հոկտեմբերի 18-ին ՀՀ վիճակագրության պետական խորհրդի անդամ Ն. Բաղդասարյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Պատրաստվածության աջակցություն» Կանաչ Կլիմա Հիմնադրամի ծրագրի շրջանակում «Երկրի ծրագիրը» քննարկմանը նվիրված սեմինարին,
- ✓ 2019թ. հոկտեմբերի 21-29-ը Վճարային հշվեկշռի և արտաքին առևտրի վիճակագրության բաժնի գլխավոր մասնագետներ Հ. Ջանլայանը և Կ. Շահբազյանը, նույն բաժնի առաջին կարգի մասնագետ Է. Գևորգյանը և երկրորդ կարգի մասնագետ Ա. Սաֆյանը մասնակցել են ք. Երևանում կայացած «Ծառայությունների միջազգային առևտրի վիճակագրություն» խորագրով առցանց դասընթացին,
- ✓ 2019թ. հոկտեմբերի 22-ին Միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ Հ. Եղիազարյանը և Իրավաբանական բաժնի առաջատար մասնագետ Գ. Մուրադյանը մասնակցել են ք. Երևանում կայացած «ՀՀ-ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի շրջանակներում նախատեսվող ներպետական օրենսդրության մոտարկման գործընթացներին աջակցելություն» ծրագրի շրջանակում ՀՀ պետական մարմինների համար համապարփակ ու շարունակական վերապատրաստմանը,
- ✓ 2019թ. հոկտեմբերի 24-26-ը Ֆինանսների վիճակագրության բաժնի առաջին կարգի մասնագետ Լ. Ասլանյանը մասնակցել է ք. Ապարանում կայացած «Ռազմավարական կառավարում տարածքային զարգացման մեջ» 4-րդ դասընթացին,
- ✓ 2019թ. հոկտեմբերի 28-ին Տնային տնտեսությունների վիճակագրության բաժնի երկրորդ կարգի մասնագետ Լ. Ավետիսյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Դպրոցական սնուցման ազդեցությունը երեխաների ուսման վրա» գնահատման արդյունքների ներկայացմանը,

- ✓ 2019թ. հոկտեմբերի 29-ին Գյուղատնտեսության վիճակագրության բաժնի պետ Ա. Ավագյանը մասնակցել է ք. Երևանում տեսակոնֆերանսի միջոցով կայացած ԵԱՏՄ Խորհրդատվական կոմիտեի «Կանխատեսում» ուղղությամբ ագրո-արդյունաբերական համալիրի գծով աշխատանքային խմբի նիստին,
- ✓ 2019թ. հոկտեմբերի 31-ին Մարդահամարի և Ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կոյունջանը մասնակցել է ք. Երևանում կայացած ««Ազգային փոքրամասնությունների մասին» օրենքի նախագիծ՝ նկատառումներ, խնդիրներ և հնարավորություններ» խորագրով խորհրդաժողովին,
- ✓ 2019թ. հոկտեմբերի 31-ին Ֆինանսների վիճակագրության բաժնի պետ Հ. Տիտիգյանը և Մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների բաժնի գլխավոր մասնագետ Ն. Աստվածատուրովան մասնակցել են ք. Երևանում տեսակոնֆերանսի միջոցով կայացած ԵԱՏՄ անդամ-պետությունների տնտեսական զարգացման կայունության որոշման նպատակով մակրոտնտեսական ցուցանիշների հաշվարկման գծով աշխատանքային խմբի 16-րդ նիստին,
- ✓ 2019թ. հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին Արդյունաբերության և էներգետիկայի վիճակագրության բաժնի պետ Ա. Ավետիսյանը, նույն բաժնի գլխավոր մասնագետներ Հ. Հովհաննիսյանը և Հ. Հակոբյանը մասնակցել են ք. Երևանում «Շրջակա միջավայրի հաշվապահական հաշվառման – էներգետիկ հաշիվների համակարգի արտադրություն և քաղաքականության համար էներգետիկ տեղեկատվության օգտագործում» տարածաշրջնային ծրագրի առցանց դասընթացին: